

(ամեք՝ մէկըն):

ե) Միայն Վանի բարբառին է հատուկ թուրքերեն **բիւթիւն** ձևը (Բայազետի բարբառում այն հանդիպում է միայն երկու կապակցություններում և թերևս ազդեցության հետևանք է), միայն Խոյ-Մարաղայի բարբառում է դրսևորվում պարսկերեն **հմիդ** (և դրանով ձևավորված **հմի ր մէկը**) ձևը, և միայն Արարատյան բարբառում է գործառում **բ'օլօրը** ձևը:

ОПРЕДЕЛИТЕЛЬНЫЕ МЕСТОИМЕННИЯ В БАЯЗЕТСКОМ И БЛИЖНИХ ДИАЛЕКТАХ

В. Л. КАТВАЛЯН

В статье рассматриваются определительные местоимения баязетского диалекта в сравнении с соответствующими диалектами Вана, Мшо, Диадина, Араратского, Хой-Марага.

Представлены семантические, морфологические и сочетаемостные особенности диалектов.

THE DEFINITE PRONOUNS IN THE DIALECT OF BAYAZET AND IN THE DIALECTS KIN TO IT

V. L. KATVALYAN

The article gives the study of the definite pronouns in the dialect of Bayazet compared with the appropriate pronouns in the dialects of Van, Mush, Diadin, Ararat, Khoy-Marash. It presents the semantic, morphological and phrasal features of the definite pronouns in the dialect of Bayazet.

ՀՐԱՉՅԱ ՍԱՐՈՒԻՆԱՆԻ ԲԱՌԱՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Թ. Ա. ԱՍՈՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս*

Մարդու և նրան շրջապատող աշխարհի հարաբերումը իրականացնում է նախ և առաջ բառերի միջոցով: Ցանկացած իրողություն, երևույթ, առարկա նախապես բառավորվում է, հանդես է գալիս բառի տեսքով, իսկ այնուհետև մտնում հաղորդակցական ոլորտ: Սա է պատճառը, որ լեզվի բառապաշարը, ի տարբերություն լեզվի կառուցվածքային մյուս բաղադրիչների, միշտ ենթակա է արտալեզվական գործոնների ազդեցությանը: Այն խիստ զգայուն է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող տարաբնույթ փոփոխությունների նկատմամբ և անմիջապես արձագանքում է դրանց: Այստեղից էլ հետևում է, որ բազմակողմանի կյանքով ապրող ժողովուրդը, որն հաղորդակից է աշխարհում

տեղի ունեցող փոփոխություններին, ինչ-որ չափով դառնում է դրանց մասնակիցն ու կրողը, ունենում է հարուստ և զարգացած բառապաշար:

Անցյալ դարի 80-ական թվականներին անկախության, ազգային խնդիրների լուծման համար ծավալված պայքարը հայ ժողովրդի կյանքում հանգեցրեց թե տնտեսական, թե հասարակական-քաղաքական լուրջ փոփոխությունների: Այդ պայքարով սկզբնավորվեց նաև հայոց լեզվի բառապաշարի զարգացման նոր փուլը: Հայերենի բառակազմն այս տարիներին հարստացավ հազարավոր նոր բառերով և իմաստներով: Այսպես, Ս. Էլոյանի կազմած «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը» պարունակում է 7715 բառ¹: Այնուամենայնիվ, «նորաբանություն» եզրույթը, ինչպես նշում են որոշ լեզվաբաններ, անհրաժեշտ է ճիշտ կիրառել հատկապես ժամանակային առումով: Բանն այն է, որ տարբեր տարիներին/ նույնիսկ անցյալ դարի 80-ական թվականներին/ լույս տեսած լեզվաբանական գրականության մեջ նույն բառացանկը այսօր էլ ներկայացվում է իբրև նորաբանություն՝ այն դեպքում, երբ բառացանկի մեջ եղած բառերն արդեն վաղուց մտել են գործուն բառաշերտ: Այս առումով ճիշտ է նկատում Լ. Եզեկյանը՝ ասելով, թե «Նախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է նորաբանությունը, որ բառերն են մտնում նշված բառաշերտի մեջ, և որոնք են նորաբանությունների տարբերակման չափանիշներն ու սահմանները»²:

Եղ. Աղայանը նորաբանությունները դիտարկում է լայն և նեղ առումներով: «Լայն առումով նորաբանություն է կոչվում լեզվական ամեն մի նոր իրակություն կամ իրողություն: Նեղ առումով՝ բառագիտության տեսակետից, նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, դարձվածք, առանձնահատուկ արտահայտություն /իդիոմ/, բառի նոր իմաստ, բառագործածության նոր իրողություն», - գրում է նա³: Իհարկե, դիտարկումը ճիշտ է, սակայն ժամանակի հանգամանքը հաշվի չի առնված:

Թերևս բառային փոխառությունների հարցն էլ կարելի է դիտարկել լայն և նեղ առումներով՝ այս դեպքում նկատի ունենալով ժամանակի հանգամանքը: Այսպես, լեզվի ողջ բառակազմը ներկայացվում է բացատրական և այլ կարգի բառարաններում: Եթե նկատի ունենանք, որ հայերենի բառապաշարն ամփոփող վերջին բառարաններն են Հովհ. Բարսեղյանի «Հայերենի ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» /1973/, Եղ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» /1976-77/, ապա կարելի է ասել, որ 20-րդ դարի 70-ական թվականներից հետո նոր ստեղծված կամ փոխառյալ բառերը նորաբանություններ են լայն առումով: Նկատենք, որ այդ բառաշերտի մեջ մտնող բառերի մեծ մասն այսօր սովորական ու լայն կիրառություն ունի և մտել է գործուն բառապաշար: Նեղ առումով նորաբանություններ կարելի է համարել այն բառերը կամ իմաստները, որոնք առաջացել են լեզվի զարգացման տվյալ փուլում, որոնք բառարանային գրանցում չեն ստացել կամ չեն մտել գործուն բառապաշար և «... որոշակի ժամանակահատվածում կարող են անհասկանալի, ան-

¹ Տես Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի», 2002:

² Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007, էջ 161:

³ Եղ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1984, էջ 169-170:

մատչելի լինել շատերի համար»:⁴ Օրինակ՝ եթե անցյալ դարի 70-80-ական թվականներին ստեղծված բառերը լայն առունով նորաբանություններ են, ապա նեղ առունով դրանք արդեն նորաբանություններ չեն, եթե նույնիսկ չեն էլ գործածվում: Ուրեմն, բառերը նորաբանություններ են ժամանակային համեմատաբար կարճ տարածքի վրա:

Նորաբանությունների համակարգում առանձնացվում են հետևյալ խմբերը. 1. նորաբանություններ, որոնք ստեղծվում են հասարակության, ժողովրդի կյանքում տեղի ունեցած տեղաշարժերի արդյունքում ու հրամայականով. անվանել է պետք նոր երևույթները, առարկաները, իրողությունները: Ընդ որում՝ շատ դեպքերում անհրաժեշտություն է առաջանում սկզբնական շրջանում նոր իրողությունները ներկայացնել փոխառյալ բառերի միջոցով, մինչև համապատասխան համարժեքների ստեղծումը: Պետք է ասել, որ սրանք հետագայում մտնում են գործուն բառապաշար: 2. Նորաբանություններ, որոնք ստեղծվում են առանձին հեղինակների կողմից՝ հիմնականում արտահայտչականության հասնելու նպատակով: Սրանք ըստ էության մնում են հեղինակի սեփականությունը, տարածում չեն ստանում և հաճախ մնում են անհայտ, եթե դրանց ուսումնասիրությամբ չեն զբաղվում մասնագետները: Հանդես գալով հիմնականում գեղարվեստական խոսքում՝ ունենում են մեկանգամյա կիրառություն և այլևս չեն գործածվում: Չնայած նման սահմանափակությանը՝ այնուամենայնիվ դրանք լեզվական-արտահայտչական որոշակի խնդիրներ են լուծում: Գրողի, բանաստեղծի խոհը, զցացնում են, ապրումները, տրամադրության ելևէջումները դրսևորվում են համապատասխան լեզվական միջոցներով: Հարուստ բառապաշար, բառագործածական հմտություն, բառեր ստեղծելու ունակություն ունեցող բանաստեղծի ստեղծագործությունները արտահայտում են մտահղացումների ցանկացած երանգ, քանի որ իմաստակիր միավոր լինելուց բացի՝ բառերն օժտված են կիրառական-ոճական մեծ հնարավորություններով, որոնցով էլ պայմանավորված է գեղարվեստական երկի արտահայտչականությունը: Նկատի ունենալով նորաբանությունների նշված առանձնահատկությունները՝ էդ. Աղայանը առանձնացնում է ընդհանրացող և մեկուսացած նորաբանությունների խմբերը⁵: Լ. Եզեկյանը տարբերակում է բուն կամ լեզվական և խոսքային կամ անհատական նորաբանություններ: Վերջին դեպքում նպատակահարմար է գտնում անվանել հեղինակային նորակազմություններ⁶: Անհատական նորաբանությունները այդպես է անվանում նաև Ա. Սուքիասյանը⁷: Հարցին գրեթե նույն կերպ է մոտենում Ա. Մարությանը՝ առաջին խմբի բառերն անվանելով նոր բառեր, իսկ երկրորդ խմբինը՝ հեղինակային նորաբանություններ⁸:

Գեղարվեստական գրականությունն է այն հիմնական միջավայրը, որտեղ լիարժեքորեն ծավալվում է լեզուն իր բոլոր դրսևորումներով, բացահայտում իր

⁴ Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 163:

⁵ Տես էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 170:

⁶ Տես Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 164:

⁷ Տես Ա. Սուքիասյան, ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն:

⁸ Ա. Մարության, Ե. Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, Երևան, «Սովետական գրող», էջ 108:

բառապաշարային, քերականական, ոճական-արտահայտչական հնարավորությունները: Իսկական բանաստեղծը ոչ միայն կարողանում է օգտագործել դրանք արտահայտչականության հասնելու նպատակով, այլև նպաստում է լեզվի զարգացմանն ու կատարելագործմանը: Ասվածը մասնավորապես վերաբերում է նաև բառապաշարային իրողություններին: Այստեղ անպայման պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք. բառաստեղծումը ստեղծագործական սկիզբ ու բնույթ ունի, բանաստեղծը չի սպասում կյանքում տեղի ունեցող փոփոխությունների, որոնք եթե փոխում են հասարակական միջավայրը, իրավիճակը, հարաբերությունները, սակայն չեն փոխում հույզի զգացումի, ապրումի բնույթն ու էությունը: Բանաստեղծը մի գերագույն խնդիր ունի. որքան հնարավոր է, իրեն համակած տրամադրությունը և ունեցած մտահղացումը ճշգրիտ, անսխալ ու անմնացորդ փոխանցել ընթերցողին՝ առաջացնելով համապատասխան զգացողություններ: Սակայն հարցը միայն այս տեսանկյունից դիտարկելը միակողմանի կլինի: Բանն այն է, որ նորաստեղծ բառերը լուծում են ոչ միայն գեղարվեստական-արտահայտչական խնդիրներ, այլև ցուցադրում են բանաստեղծի աշխարհընկալումը, երևույթներն ընկալելու կերպն ու վերարտադրելու ունակությունները:

Հրաչյա Սարուխանը 20-րդ դարի 80-ականներին հրապարակ իջած այն բանաստեղծներից է, որոնց ստեղծագործություններն աչքի են ընկնում ինքնատիպությամբ, թարմությամբ, իր սերնդի և ժամանակի հոգեբանության խորը ընդգրկումներով: Բանաստեղծի ինքնատիպության դրսևորումներից մեկն էլ բառաստեղծման հզոր ունակությունն է: 1999 թ. գրողի 50-ամյակի կապակցությամբ լույս տեսած «Աստծո առավոտ» ժողովածուն ընդգրկում է բանաստեղծություններ տարբեր տարիներին հրատարակված ժողովածուներից: Թեմաները բազմազան են՝ հայրենիք, ծննդավայր, ժամանակ ու միջավայր, տրամադրություններն էլ տարբեր են, որոնք պայմանավորված են հենց թեմաներով՝ սեր, թախիծ, տխրություն, շփոթվածություն և անորոշություն՝ կապված հայոց կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունների հետ: Բոլոր դեպքերում բանաստեղծը ցուցաբերում է բառագործածության յուրահատուկ զգացողություն: Տրամադրությունների արտահայտման համար անհրաժեշտ բառերի պակասը նա հմտորեն լրացնում է իր ստեղծած նորակազմություններով, որոնք կազմված են հայերենում գործող բառակազմական օրինաչափություններին համապատասխան՝ ածանցմամբ և բառաբարդմամբ: Նշված ժողովածուում մեր հաշվումներով կա 220-ից ավելի նորակազմ բառեր, որոնց մի մասը արձանագրված է Ս. Էլոյանի վերոհիշյալ բառարանում, իսկ ընդհանրապես վկայված չեն մինչ այդ հրատարակված բառարաններում:

Ժողովածուի նորակազմ բառերի մեծամասնությունը կազմում են ածականները, քիչ են բայերը: Ըստ խոսքիմասային պատկանելիության դասակարգելիս ունենում ենք հետևյալ պատկերը.

1. Գոյականներ – սրանք հիմնականում բարդ են կամ բարդածանցավոր, բարդ գոյականները երկբաղադրիչ են և հողակապավոր: Օրինակ՝ աստվածամարդ, հարսնաձուկ, հուշադարան, ամոթացավ, ատամնավարդ, բամբասահողմ, խառնագավաթ, ծովահոտ, ծաղկահող, մնանյութ, շնավախ, սրբածառ, վարդականթեղ, արտասովահուշ, արեգնաջահ և այլն: Անհոդակապ բարդություն է սր-

տուղեղ բառը:

Բարդածանցավոր գոյականները համեմատաբար քիչ են. բազմաշխարհություն, խանդադիտակ, խոնջահավք, խմբախոսություն, հոգեգիրք, հուշամուկություն, ծյունագծում, լուսաճենություն, լուսաշարան: Առավել կենսունակ է -ություն ածանցը:

Ածանցավոր գոյականները ևս սակավաթիվ են: Նախածանցավոր են նախ/ա/- և տար/ա/ - ածանցներով բաղադրված նախաջուր, նախասարդ, տարահայր գոյականները: Վերջածանցավոր են -արան ածանցով կազմված նյութարան, գոյարան գոյականները, իսկ ծյունեղություն բառում առկա են -եղ և -ություն վերջածանցները:

2. Գոյականների համեմատ մեծ թիվ են կազմում ածականները: Բարդ ածականների մեծ մասը հոդակապավոր է, ինչպես՝ արևախև, դեղաբորբ, մահամշուշ, ախորժակիրթ, աղետացնոր, ապառաբույր, աստեղնախոս, աղոտանշմար, անդորրագուրկ, այլամիտ, աճյունակիր, բաղձաբույր, բյուրահազար, բնագդահուլ, դատրաչափ, եռաներանգ, գինեհար, զոհափառ, թարախակարմիր, թախծահամ և այլն: Անհոդակապ են լրջանում, խստաղետ, կապկառատ, քստմնաղետ ածականները:

Բարդածանցավորները քիչ են. անդռնակիր, անթվակիր, անդաշնուրաց, անկենսատրոփ, անշահարկամիտ, անփառատենչ /ան- ածանցով/, արբենուլային /-ային/, ակնթարթե /-ե /, գարեջրոտ, կաթնաշաղոտ /-ոտ /, եվրաշրջիկ, նախնաշխարհիկ /-իկ /, ինքնալքյալ /-յալ /, խավարախորհուրդ /-ուրդ /: Ածանցավոր ածականներն են՝ անհովան /ան-/, գնացական /-ական/, զոհեղեն, ծաղկեղեն /-եղեն/, հնավետ /-ավետ/, հնչվոր /-վոր/, գրոհացու /-ացու/, գրոշե /-ե/, մահացյալ, պաշտեցյալ, վրիպյալ /-յալ/, մարսեղ /-եղ/, տատենական /-ական/, զահրատավուն /-ավուն/:

3. Նորակազմ բայերը համադրական կազմություն ունեն: Բացառություն են կազմում կոնծահեղձ անել և մայրալաց տալ բայերը: Մնացածները հիմնականում երկարմատ բաղադրահիմքով կազմություններ են: Այս դեպքում էլ բացառություն են կատվանալ, կնոտվել, վայրկյանատվել, տարաբանվել և մենակվել բայերը: Հայերենում մեծ տարածում ունի -ել վերջավորությամբ բայակազմությունը: Այս առումով բացառություն չեն կազմում Հր. Սարուխանի նորակազմությունները. ժահրաբանել, թունակալել, հուսաբանել, հեղձամղձել, տանջահարվել, անուշագոծել, խելախոսել, մենաթախծել, անվանալքվել, օրինագրկվել, քեֆակալել, հուշագարդել, բոլորատևել, կենսակոչել, բանահյուսել, հուսանավել, հնչերգել, հրաշագոծել, անուշախոսել: Ինչպես օրինակներից է երևում, նշված բայերից մի քանիսը կազմությամբ ածանցավոր են /ունեն վ ածանցը /, մյուսները պարզ են: Չայն ածել հարադրությունը Սարուխանի մոտ հանդես է եկել համադրական կազմությամբ՝ ձայնածել:

Հր. Սարուխանի բարդ նորակազմությունները ստեղծված են տարբեր խոսքիմասային պատկանելություն ունեցող բաղադրիչների զանազան զուգորդություններով: Այդպես ստեղծվել են կառուցվածքային տարբեր կաղապարներ ունեցող նորակազմ բառեր.

1. Գոյական - գոյական կաղապարով կազմվել են գոյականի նշանակությամբ բառեր՝ ամոթացավ, ատամնավարդ, արեգնաջահ, աչքափուշ, աստվածամարդ,

ծաղկահող, կավախեցի, հոգեգիրք, հուշադարան, սրտուղեղ: Ածականի արժեք ունեն թունաքիստ, լուսագարմ, լացագույն, հուղայապաչ, ճորտագարմ, մառախլափայլ, քնակարոտ, ծննդաբույր, տեսլակերպ, սգակրկորդ:

2. Գոյական - ածական կաղապարով ածականի նշանակությամբ բառեր է կազմում. անդորրագուրկ, բնագդահուլ, եղծապարարտ, թարախակարմիր. կապկառատ:

3. Ածական - գոյական կաղապարով նույնպես բավական ածականներ են կազմվել. անուշամորմոք, դեղնածալ, լրջանուն, խստաղետ, հեզանինջ, հայտնաճռինչ, մերկանվագ, նորատերև, սևափաթիլ, պարզաշունչ, խավարախորհուրդ, մենամորմոք:

4. Գոյական - բայարմատ կաղապարով կազմություններն ավելի կետունակ են ու շատ և ունեն հիմնականում ածականի խոսքիմասային արժեք. աստեղնախոս, արգանդաբնակ, աճյունակիր, նենգացնոր, եղեռնապուրծ, մեղսատոչոր, մութահամակ, մորթեկիր, ողբակիր, վինահար, զեփյուռահար :

5. Ածական-բայ կաղապարով են կազմված խևաթափառ, բարեհարդար և աղոտա-նշմար ածականները: Թվական-գոյական կաղապարով կազմվել են եռաերանգ, եռակենաց, քառաստինք և քառասնաբույր, իսկ դերանուն - բայա-հիմք հարաբերությամբ՝ իրարահաղորդ, ինքնամերձ ածականները: Միակ բառը, որ կազմվել է դերանուն-ածական կաղապարով, ինքնալքյալ բառն է:

Ավելացնենք նաև, որ Հր. Սարուխանը թե բառաստեղծման, թե բառագործածության հրաշալի զգացողություն ունի, որն էլ ապահովում է նրա ստեղծագործությունների ինքնատիպությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1984:
2. **Եզեկյան Լ.**, Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007:
3. **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի», 2002:
4. **Մարության Ա.**, Ե.Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, Երևան, «Սովետական գրող»:
5. **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1986:

ОБ ОСОБЕННОСТЯХ СОЗДАНИЯ СЛОВ Р. САРУХАНОМ

Т. А. АСОЯН

Основное средство обогащения и преобразования лексики является ее обогащение лексическими и семантическими неологизмами. Важный вклад в это дело внесли писатели и поэты. Гр. Сарухан является одним из тех поэтов, который отличается способностью создавать новые слова. Его авторские неологизмы создают большие возможности, делающие стихотворения описательными и выразительными.

The main way of enriching and improving vocabulary is to add lexical and semantic neologisms. The writers, poets have important contributions in it. Hr. Sarukhan is one of the poets who are famous for the ability of forming new words. His neologisms bring forth stylistic and applied great opportunities, which make the poems figurative and expressive.

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԻԵՐԸ V ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ն. Ա. ԻՍԿԱՆՊԱՐՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս*

Քրիստոնեությունն իր առաջադեմ գաղափարներով, բարու, ճշմարտի իր աներեր հավատամքով մեծ դեր է ունեցել հայ ժողովրդի կյանքում՝ հոգևոր աշխարհի ազնվացման ու հզորացման առումով: Թեև այն օտար հավատք էր, ձևավորվել էր մեր արմատներից հեռու, ապա մատուցվել մեզ բռնությամբ ու պարտադրանքով, սակայն տարօրինակ մի նախախնամությամբ, դարերի ընթացքում քրիստոնեությունը հայ մարդու համար միս ու արյուն դարձավ, դարձավ կենսակերպ, հոգեկերտվածք:

V դարում ընդհանուր քրիստոնեական արարողակարգերն ու դրանց համապատասխանող եկեղեցական գրականության տեսակները, նախքան ինքնուրույն գրականության սկզբնավորումը, արդեն ծանոթ էին մեր հոգևոր հայրերին, իսկ վարքերի ու վկայաբանությունների մասին հայ մատենագիրները սկզբնապես տեղյակ էին ասորական և հունական աղբյուրներից: Ազաթանգեղոսը վկայում է, որ, օրինակ, Կոստանդինի վարքը ոչ միայն տարածված էր հայոց մեջ, այլև հատուկ տոնով հիշատակվում էր հայ եկեղեցու կողմից, Ս. Խորենացին ևս հիշում է նրան. «Թագավորելուց առաջ, քանի որ դեռ կեսար էր, կռվի մեջ պարտություն կրեց և մեծ տրտմության մեջ քնելով, քնի մեջ նրան երևաց երկնքից՝ աստղերից /բաղկացած/ խաչ, շուրջը գրված՝ «Արանով հաղթիր»: Որը պատերազմական նշան շինելով և /գործի/ առջևից տանելով, պատերազմներում հաղթեց»¹:

Հարանց վարքերի ասորական ժողովածուները նույնպես հայտնի էին հայ մատենագիրներին, օրինակ, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ Դանիելի հատվածը /Գ դպր., գլ. ԺԳ/, Ս. Խորենացու «Հայոց պատմության» մեջ «Աղոյալի վարդապետությունը» /Աբգարի զրույցը/, նրանց հայտնի էր նաև ասոր-

¹ Ս. Խորենացի, Հայոց պատմություն. Ե., 1981, էջ 227: